Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի 2022 թվականի նոյեմբերի 24-ի N1109 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի 2022 թվականի նոյեմբերի 11-ի N1-Ա- N2-Ա, 2022 թվականի նոյեմբերի 12-ի N3-Ա, 2022 թվականի նոյեմբերի 16-ի N4-Ա-N5-Ա, 2022 թվականի նոյեմբերի 18-ի N6-Ա-N8-Ա, 2022 թվականի նոյեմբերի 21-ի N9-Ա- N11-Ա, 2022 թվականի նոյեմբերի 23-ի N12-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N1-Ա–N12-Ա որոշումների հերթական համարները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին։
2. N8-Ա, N10-Ա և N11-Ա որոշումների նախաբաններում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի փոխարեն անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին։
3. N12-Ա որոշման նախաբանում հղումները թերի են գրառված, իսկ որոշման 1-ին կետում գրառված հղումը նախաբանում արդեն գրառված է։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ